

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ-----	2
ՆԱԽԱԲԱՆ-----	3
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ	
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ-----	3
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ-----	4
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----	5

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցչի կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կառուցվածքը, տրված են առաջադրանքներում ընդգրկված նյութը, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը, պատասխանի գնահատման չափանիշները, ինչպես նաև առաջարկվող գրականության ցանկը:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման քննության հարցաթերթիկի կազմման համար հիմք են հանդիսացել հանրակրթական դպրոցի ,Տեխնոլոգիա» առարկայի ծրագրերը և հանրակրթության պետական չափորոշիչների դրույթները, ինչպես նաև տեխնոլոգիային առնչվող հիմնարար գիտելիքները:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հարցաթերթիկը պարունակում է 70 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 70 միավոր (100%): Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն ընտրովի պատասխան:

Առաջադրանքներից յուրաքանչյուրի համար բերված են պատասխանների 4 հնարավոր տարբերակներ:

Գնահատման չափանիշը. ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանին, կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Բոլոր առաջադրանքները ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, հետևաբար մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է զրո: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը:

Վերջնական և վավեր է համարվում միայն Պատասխանների ձևաթուղթը: Ձևաթղթում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Ձևջումներով Պատասխանների ձևաթուղթը համարվում է անվավեր: Մինևույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0(զրո): Ձևաթղթի լրացուցիչ հատվածում հնարավորություն է տրված 3 սխալ պատասխանները ճշգրտելու համար՝ առանց հիմնական ձևաթղթում ջնջում կատարելու:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Բովանդակային առումով հարցաթերթիկում առկա են Տեխնոլոգիա և առարկայի հիմնական բաժիններից՝ գրաֆիկա, փայտամշակման տեխնոլոգիա, մետաղամշակման տեխնոլոգիա, մետաղների գեղարվեստական մշակում, մեքենագիտության տարրեր, էլեկտրատեխնիկա, խոհարարություն, հագուստի պատրաստման տեխնոլոգիա, նյութերի գեղարվեստական մշակում, դիզայն, մասնագիտական կողմնորոշում, տնտեսավարման և ձեռնարկչության տարրեր (ձեռներեցություն), նախագիծ:

Առաջարկվող գրականության ցանկը ներկայացված է ըստ թեստերում ընդգրկված բաժինների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ժ. Ավետիսյան / Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, - Եր., Էդիթ Պրինտ, 2023
2. Կ. Սողոմոնյան/ Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, -Եր., Աստղիկ Գրատուն 2023
3. Ս.Հովսեփյան, Ա.Հարությունյան, Մ.Աղաջանյան, Լ.Վերդյան/ Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, - Եր., Տիգրան Մեծ, 2020
4. Կ.Հ.Սողոմոնյան, Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Եր., <<Աստղիկ գրատուն>> հրատ., 2020
5. Ս.Հովսեփյան, Ա.Հարությունյան, Մ.Աղաջանյան, Լ.Վերդյան/ Տեխնոլոգիա: V-VII դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ, - Եր., Տիգրան Մեծ, 2014
6. Ժ. Ավետիսյան/ <<Տեխնոլոգիա>> գործնական աշխատանքների: 5-7-րդ դասարանների ուսուցչի մեթոդական ձեռնարկ/ - Եր., <<Աստղիկ գրատուն>>, 2014
7. Ժ. Ավետիսյան/ <<Տեխնոլոգիա>> Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարան ուսուցչի մեթոդական ուղեցույց, - Եր., Էդիթ Պրինտ, 2023
8. Կ. Սողոմոնյան/ Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարան ուսուցչի մեթոդական ուղեցույց, - Եր., Աստղիկ Գրատուն 2023